ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1964 Общественные науки

# ՍՐԲՈՒՀԻ ԼԻՍԻՑՅԱՆ

(Ծննդյան 70-ամյակի սորիվ)

Լրացավ հայ ժողովրդական պարարվեստի նշանավոր տեսաբան, պատմական գիտությունների դոկտոր Սրբուհի Ստ. Լիսիցյանի ծննդյան 70-ամյակը և գիտա-մանկավարժական գործունեության 50-ամյակը:

Ս. Լիսիցյանը ծնվել է Թիֆլիսում, 1893 թ., հայտնի մանկավարժներ և հասարակական գործիչներ Ստեփան և Եկատերինա Լիսիցյանների ընտանիքում: Տարրական կրթությունը սաացել է մոր հիմնադրած դպրոցում, ապա շարունակել է սովորել Թիֆլիսի առաջին իգական գիմնազիայում, որի 7-րդ դասարանը նա 1909-ին ավարտել է ոսկե մեդալով: 1910-ին ավարտելով ութերորդ մանկավարժական դասարանի պատմա-աշխարհագրական բաժինը, նա 1910—1911 ուստարում Լիսիցյան գիմնազիայում պատմության և գերմաներեն լեզվի դասատու էր: Ուսմանն ու աշխատանքին զուգընթաց Ս. Լիսիցյանն ուսումնասիրում էր գերմաներեն և ֆրանսերեն լեզուները:

1911—1917 թթ. Ս. Լիսիցյանն ուսումը շարունակել է Մոսկվայում: Այստեղ նա զուգընթացորեն սովորել է երեք տարբեր բնագավառներում՝ 1. Դերյեի անվան իգական բարձրագույն կուրսերի պատմա-փիլիսոփայական ֆակուլտետում, 2. Օ. Է. Օզերովսկու դրամայի և արտահայտիչ խոսքի ստուդիայում (որտեղ միաժամանակ 1915—1917 թթ. դասատու-ասիստենտ էր), 3. Ի. Ս. Ջերնեցկու պարի ստուդիայում (որտեղ 1916—1917 թթ. նույնպես դասատու-ասիստենտ էր):

Մասնագիտական կրթություն ստանալուց և մանկավարժական աշխատանքի փորձ ձեռք բերելուց հետո, Ս. Լիսիցյանը 1917 թ. աշնանը վերադառնում է Թիֆլիս և սեպտեմբերին հիմնում է *արտասանության, ռիթմի և պլաստիկայի* ստուդիա:

Վրաստանում 1921 թ. խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Լուսժողկոմատն այդ ստուդիան վերակառուցում է *ռիթմի և պլաստիկայի ինստիտուտի*, որտեղ Ս. Լիսիցյանը շարունակում է իր աշխատանքը:

1921—1925 թթ. Ս. Լիսիցյանն աշխատել է նաև Թիֆլիսի կոնսերվատորիայի օպերային դասարանում՝ բեմական շարժման, ռիթմի և պարերի գծով:

1930 թ. Ս. Լիսիցյանը հրավիրվում է Երևան. այստեղ մինչև 1938 թ. վերջերը նա գրաղեցնում էր խորեոգրաֆիկ ուսումնարանի դիրեկտորի և ավագ դասատուի պաշտոնը: 1932—1935 թթ. համատեղության կարգով նա եղել է Լուսժողկոմատի նյութական կուլտուրայի ինստիտուտի գիտական աշխատող: Այդտեղ նա մասնակցել է շրջանները մեկնող գիտական արշավախմբերին: Թալինի շրջանում նա գիտական սկզբունքներով գրի է առել 70 հայկական պար: 1936-ին մասնակցել է Ն. Բայազետի և Աղմաղանի շրջանները մեկնող գիտարշավի գործունեությանը:

1938—1941 թթ. Ս. Լիսիցյանն աշխատել է Մոսկվայի «Искусство» հրատարակչությունում, որտեղ հրատարակության է պատրաստում իր նշանավոր մենագրությունը՝ «Запись

движения (кинетография)» վերտառությամբ: Այդ ժամանակամիջոցներում նա գրել է մի շարք հոդվածներ, որ վերաբերում էին պարարվեստին և պարատեսակները դրի առնելու խնդիրներին: Միաժամանակ նա Մեծ թատրոնի դերասանների համար կարդում էր շարժման գրանցման արվեստը:

1942 թ. Ս. Լիսիցյանն աշխատանքի է անցնում Ռ. Մելիքյանի անվան երաժշտական կաբինետում, ավագ գիտական աշխատողի պաշտոնով: Այդ աշխատանքը նա շարունակում էր մինչև 1959 թ. աշունը, երբ նախկին կաբինետն արդեն վերակառուցվել էր արվեստի ինստիտուտի 1945 թ. սկսած հասատեղության կարգով նա աշխատել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտում դոցենտի պաշտոնով, ուր մինչև 1963 թ. դասավանդում էր բեմական շարժումների, ռիթմի և հայկական պարերի արվեստը:

1959 թ. աշնանը գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ Ս. Լիսիցյանը տեղափոխվում է նորաստեղծ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության սեկտորը, որտեղ և այժմ աշխատում է:

Ուսումնասիրության շրջանից սկսած Ս. Լիսիցյանը տեսական ու գործնական աշխատանքները հմտորեն զուգակցել և առաջ է տարել իր փայփայած մեծ նպատակը՝ արվեստագիտական գանձարան մտցնել հայ ժողովրդի ամբողջ պարարվեստի հարստությունները և մեկնել դրանց իմաստաբանությունը: Լինելով պարարվեստի հմուտ մեկնաբան, Ս. Լիսիցյանը գիտական գործունեությունը կամ պարարվեստի ուսումնասիրումն սկսել է բանահավաքչական ծանր ու շնորհակալ աշխատանքով՝ դեռևս մեր դարու սկզբից, երբ գտնվում էր ուսումնասիրության շրջանում: Նա այժմ էլ, իր պատկառելի տարիքում նյութերի գրանցումները կատարում է մեծ բավականությամբ ու բացառիկ բարեխղճությամբ:

Երաժշտական բանահյուսության գրանցումը նա կատարել և կատարում է կոմպլեքսային կարգով: Պարերգի բնագրին զուգակցում են դրանց եղանակի ձայնագրումը, նոտագրումը և պարի շարժման ձևերի գրանցումն ըստ հեղինակի ստեղծած սիստեմի: Դրանով է, որ ժողովրդական հոգևոր ստեղծագործությունները դառնում են մի տեսակ նյութական արժեքներ:

Ս. Լիսիցյանն այս մեթոդով գրի է առել պատմական Հայաստանի հիմնական *ազգագրական շրջանների* պարաձևերը: Իր շուրջը համախմբելով բազմաթիվ բանահավաքների, նա իր անխոնջ աշխատանքի շնորհիվ հավետ կորստյան վտանգից փրկել է հարյուրավոր պարեր: Միաժամանակ նա գրի է առնում իր նախասիրած նյութերի հետ անմիջական առնչություն ունեցող ազգագրական տվյալները:

Գրանցման և ուսումնասիրման փորձը Ս. Լիսիցյանին հանգեցրին պարերի շարժման ու բեմական տեղորոշման «նոտագրմանը»: Եվրոպայում դեռևս միջին դարերում հայտնի այդ եղանակը մեծ թերություններ ուներ: Ս. Լիսիցյանն ստեղծեց նոր սիստեմ, որից և գոյացավ նրա՝ միջազգային նշանակություն ստացած «Запись движения (кинетография)» մեծածավալ աշխատությունը (1940 թ.): Այդ աշխատության համար Ս. Լիսիցյանը 1947 թ. ստացել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան և դոցենտի կոչում: Այդ սիստեմն ունի միայն մի քանի տասնյակ սիմվոլներ, որոնցով գրի են առնվում բոլոր շարժումները: Իր իսկ մեթոդով Ս. Լիսիցյանն անձամբ գրի է առել ավելի քան 650 հայկական և 50 հրդական պարեր:

Ճշգրտությամբ գրանցված այդ նյութերն էին, որ դարձան հեղինակի «Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները» սավարածավալ մենագրության հիմքը: Այս հինգ հատորանոց աշխատությունն ընդգրկում է հայ ժողովրդի հոգևոր հարստության մի ամբողջ բնագավառ, որը հեղինակի տասնյակ տարիների տքնաջան, համառ, ազնիվ ու հայրենանվեր աշխատանքի արդյունքն է: Այդ նյութերը ներկայացնում են՝ անհատական պարերը, թատերական տարբեր ունեցող պարերը և զուտ թատերական բնույթի պարերը: Ըստ արտահայտիչների դասակարգելուց հետո Ս. Լիսիցյանը պարերը քննության է առել ներքին էության բացահայտման ձգտումով: Վերլուծման այդ եղանակով նա կարողացել է թափանցել յուրաքանչյուր պարատեսակի ակունքները, գտել ծագումը, պատմական զարգացման ընթացքը, ժամանակների թողած նստվածքները և այլն: Մեգանում նրան է պատկանում պարային շարժումների մեջ էպիկական ու դիցաբանական գործողությունների, նախնիների և պտղաբերության հետ կապված պաշտամունքների, տոտեմիզմի վերապրուկների և այլ երևույթների հայտնագործման առաջնությունը: Պարերի մեջ նա տեսնում է ժողովրդի առօրյա կյանքի գլխավոր նշանակություն ունեցող դրվագները, տնտեսությունը, ռազմական կյանքը, իրական ու ֆանտաստիկ կենդանիների կերպավորումները և այլն:

Ս. Լիսիցյանը հայկական պարերի շարժումների, գրիմների, դիմակավորման և տարազաձևերի մեջ այդ բոլորը կարողացել է տեսնել կյանքի խոր ճանաչողության, ուսումնասիրվող

նյութին լիակատար տիրապետելու, ստեղծագործական վառ երևակայության, ինչպես նաև ընդհանուր աղգագրության ու արվեստագիտության հաջատեղյակության շնորհիվ: Պարարվեստի վերլուծության բնագավառում նրա տեսությունները հիմնված են շոշափելի փաստերի վրա և նշված՝ տոնմացեղային կարգերն ապրած ժողովուրդներից հասած հավասար վկայություններով: Այս ուսումնասիրության մեծ արժեքը պայմանավորված է նրանով, որ Ս. Լիսիցյան գիտնականի մեջ հավասարապես հանդես են եկել բանահավաքը, բանագետը, բալետմեյստերը, պարի արվեստաբանը, բանասերը և ազգագրագետը: Նա հմտորեն կարողացել է մեկնաբանել պարարվեստի ոլորտներն ընդգրկող բազմաթիվ տերմիններ: Փաստական նյութերի հետ դրանք իրենց նախնական իմաստներով մեծապես օգնել են հեղինակին՝ ստեղծելու ուշագրավ տեսություններ և առաջ քաշել մի շարք հիպոթեզներ:

Ինչպես ահռելի փաստական նյութի, նմանապես օրիգինալ ուսումնասիրությունների տեսակետից մեր հարգարժան հոբելյար Ս. Լիսիցյանի ստեղծած գործերն իրենց տեսակի մեջ յուրահատուկ հանրագիտարան են: Գիտական բարձր որակը հաշվի առնելով, Մոսկվայի Միկլուխո-Մակլայի անվան ազգագրական ինստիտուտը 1959 թ. «Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները» աշխատության առաջին հատորի (1958 թ.) հիման վրա Ս. Լիսիցյանին շնորհեց պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Նա առաջին հայ կին դոկտոր-պատմաբանն է:

Այս աշխատության հայագիտական բարձր արժեքն ակնհայտ է բոլոր հումանիտար գիտությունների գծով:

Ս. Լիսիցյանը այժմ համառորեն շարունակում է պարերի և թատերական ներկայացումների ուսումնասիրումը, ինչպես նաև գիտական կադրերի պատրաստումը: Նա 1964 թ. օգոստոսին Մոսկվայում տեղի ունեցած մարդաբանական և ազգագրական գիտությունների միջազգային 7-րդ կոնգրեսում հանդես եկավ «Հայ ժողովրդի պարային և թատերական ֆոլկլորը» թեմայով փայլուն զեկուցմամբ:

Վ. ԲԴՈՅԱՆ